

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՆՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 554-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «ՆՏ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Նայասարանի Նանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշման՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ գործի դատաքննությունն սկսել 2013թ. փետրվարի 12-ին, ժամը 10.00-ին:

3. Նամաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Ֆ. Թոխյանին:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սույն գործով որպես պարասխանող կողմ դատավարությանը ներգրավել նշված որոշումն ընդունած մարմնին՝ ՆՏ կառավարությանը:

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՆ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

23 հոկտեմբերի 2012 թվականի  
ՍԴԱՈ -71